ՎՐԱՍՏԱՆ. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎՐԱՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կարեն Վերանյան

Այսօր պաշտոնական Թբիլիսին հետևողական քաղաքականություն է վարում Թուրքիայում և Ադրբեջանում բնակվող վրացի բնակչության հիմնախնդիրներն ի՛ր օգտին ծառայեցնելու ուղղությամբ: Թբիլիսիի այդ նախաձեռնությունն իր արձագանքն է գտնում Վրաստանի տեղեկատվական դաշտում:

Ադրբեջանի վրաց համայնքը և Վրաստանի դիրքորոշումը

Ադրբեջանում վրացիները բնակվում են հիմնականում Բալակենի (Բելոկան), Գախիի (վրացերեն՝ Կախի) և Զագաթալայի շրջաններում (վրացիները շրջաններին տալիս են ընդհանուր «Սահնգիլո» անվանումը): Ըստ վրացական աղբյուրների[1], Ադրբեջանի Գախի շրջանը Վրաստանից անջատվել է դեռևս 1604թ., երբ շրջանի իշխանը («մոուրավ») դավաճանում է իր թագավորին, անցնում Շահ Աբասի կողմը, ընդունում իսլամ և դառնում Կախի սուլթան:

Վերջերս մամուլում, հատկապես իշխանամետ վրացական «*Georgian Times*» թերթից, հաճախ են արտատպվում և շահարկվում Թուրքիայի ու Ադրբեջանի վրաց համայնքներին մշակութային ինքնավարություն ընձեռելու կոչերը՝ գերազանցապես ուղեկցվելով նրանց նկատմամբ տարածքային պահանջներով: Պետք է ենթադրել, որ նման կարգի հրապարակումները, թերևս, չեն կարող կատարվել առանց իշխանությունների «միջնորդության» և հատկապես Մ.Սահակաշվիլու իշխանության գլուխ գալուց հետո, երբ զգալիորեն ուժեղացավ պետության վերահսկողությունը ԶԼՄ նկատմամբ:

Այսպես, 2003թ. հուլիսի 11-ին վրացական «*http://www.geotimes.ge*» էլեկտրոնային կայքէջում Զվիադ Ռուաձեի հեղինակությամբ լույս տեսավ ադրբեջանաբնակ վրացիներին նվիրված մի հոդված, որտեղ ասվում էր. *«Պետք է նշել, որ ներկայում Սահնգիլոյում գործող դպրոցներում արգելվում է Վրաստանի պատմության ուսուցումը, և որ Ալիևի պետությունը նախագիծ է մշակել, ըստ որի՝ տվյալ դպրոցների համար վրացերենով հրատարակվում ու դասավանդվում է ադրբեջանական գրականություն… Ուշագրավ է, որ Բելոկանի ու Զագաթալայի տեղական իշխանություններն ամբողջովին ոչնչացրել են Վրաստանի խորհր-*

[1] «Трагедия грузин-ингилойцев», Тбилиси, 2003г.

դարանի նախագահ Նինո Բուրջանաձեի կողմից ուղարկված 4 տոննա տարողությամբ դասագրքերը»:

Վրացական «*Georgian Times*» թերթում 2004թ. հոկտեմբերի վերջին հրատարակվեց Ադրբեջանում բնակվող վրացիներին նվիրված հերթական հոդվածը: Այն զգալի արձագանք գտավ հատկապես Ադրբեջանի լրատվամիջոցներում: Մասնավորապես՝ ադրբեջանական *«http://www.zerkalo.az»* էլեկտրոնային կայքէջում արտատպված հոդվածում (ադրբեջանցի հեղինակի մեկնաբանությամբ) մեջբերվում են վրացի հեղինակի տեսակետները: Վերջինիս վկայությամբ, *«Սաինգիլոյում»* գործում են 7 վրացական և 1 վրաց-ադրբեջանական դպրոց, որտեղ գնալով նվազում է աշակերտների թիվը: Այդ պատճառով տեղի ուսուցիչները հարկադրված են միակցել 1-3-րդ դասարանները: Վրացի հեղինակի վկայությամբ, այստեղ արդեն 7-8 տարի է, ինչ չեն դասավանդվում Վրաստանի պատմություն և աշխարհագրություն առարկաները՝ հավելելով. *«Ադրբեջանցիները չեն ցանկանում, որ վրացի երեխաներն իմանան անցյալում այս հողերի՝ Վրաստանին պատկանելու մասին...»:* Վրացի հեղինակը «Սաինգիլոն» անվանում է *Փոքր Վրաստան:*

Կրկին «*Georgian Times*» թերթում *(# 43, հոկտեմբերի 28, 2004թ. – նոյեմբերի 4, 2004թ.)* Գիա Խնելու հեղինակությամբ լույս է տեսնում *«Սաինգիլոյի հարցը և բարեկամությունը»* խորագիրը կրող հոդվածը: Հեղինակի վկայությամբ՝ 1921թ. նոյեմբերի 15-ին Զագաթալայի շրջանը Վրաստանից անցել է Ադրբեջանին, որովհետև 1921թ. հուլիսի 5-ին Վրացական ու Ադրբեջանական ԽՍՀ-ների համատեղ նիստում վրաց բոլշևիկներին ստիպել են, որ Վրացական ԽՍՀ-ն հրաժարվի Զագաթալայի շրջանի նկատմամբ հավակնություններից: Այնուհետև հեղինակը հավելում է. *«Սակայն բոլորին հայտնի է նաև այն, որ միացյալ Վրաստանի կազմում ընդգրկվում էր Կախեթի հյուսիսարևելյան մասը, որն այսօր գտնվում է Սաինգիլոյի տարածքում: Իսկ ի՞նչն է ստիպել Ադրբեջանի ղեկավարներին գրավել օտար հողերը»:* Հոդվածում նշվում է նաև, որ *«Սաինգիլոյի»* վրացիները ենթարկվում են ճնշումների, չունեն ազգային դպրոցներ, արգելվում է կրել վրացական ազգանուններ, դավանել քրիստոնեություն[1]:

Թուրքաբնակ վրացիները և Վրաստանի դիրքորոշումը

«http://www.newsgeorgia.ru» էլեկտրոնային կայքէջում 2004թ. մայիսի 21-ին լույս տեսած հոդվածում հեղինակը (Մելսիդա Հակոբյան), որպես աղբյուր վկայակոչելով վրացական «Մզե» հեռուստաընկերության հաղորդագրությունը, նշում է, որ ներկայում Թուրքիայում բնակվում է այնքան վրացի, որքան Վրաստանում: Իսկ 2002թ. հունվարին անցկաց-

[1] Տե՛ս Հավելված # 1:

ված մարդահամարի արդյունքում պարզ դարձավ, որ Վրաստանում, ըստ աղբյուրի հաղորդման, բնակվում է 3 մլն 661.173 հազ. ազգությամբ վրացի բնակիչ (երկրի բնակչության 83,8%-ը)։

Նույն օրը՝ մայիսի 21-ին, Ստամբուլում վրաց սփյուռքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին հայտարարեց, թե Թուրքիայում բնակվող վրացիները կարող են ստանալ Վրաստանի քաղաքացիություն։ Վրաստանի գործող Սահմանադրության 12-րդ հոդվածում ընդգրկված նոր սահմանադրական փոփոխության համաձայն (Սահմանադրական փոփոխություններն ընդունվել են 2004թ. փետրվարի 6-ին), Վրաստանի նախագահն իրավասու է Վրաստանի քաղաքացիություն շնորհել այլ երկրների քաղաքացիների՝ ելնելով պետության շահերից, կամ էլ նրանց, ովքեր հատուկ ծառայություններ ունեն երկրի առջև։

Ի դեպ, Թուրքիան դեռևս 1992թ. է ընդունել *«Թուրքիայում թուրք մեսխեթցիների ընդունման ու վերաբնակեցման մասին»* օրենքը։ Սակայն պաշտոնական Անկարան չի սահմանափակվում Թուրքիայում թուրք մեսխեթցիների վերաբնակեցման հարցով՝ պատրաստակամություն հայտնելով նաև Թուրքիայի քաղաքացիություն տալ այն մեսխեթցիներին, որոնք շարունակելու են բնակվել հետխորհրդային երկրներում։

Թուրքիան, իր հերթին, թուրք մեսխեթցիներին իր տարածքում վերաբնակեցնելու ծրագրով կրկին հեռահար նպատակ է հետապնդում. խնդիրն այն է, որ այսօր Թուրքիայի հարավարևելյան շրջաններում մեծ թիվ են կազմում համշենահայերը, որոնց մի մասը թուրքական ճնշումների տակ ընդունել է իսլամ։

Ըստ էության, թե՛ Թուրքիայում և թե՛ Վրաստանում վերոնշյալ խնդիրներն անմիջականորեն առնչվում են երկու երկրներում բնակվող հայության հետ, և այդ առումով Անկարան ու Թբիլիսին լուրջ խնդիրներ են տեսնում։

Վրացի մտավորականության կողմից Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջատիրությունից զատ, նման խնդիր հասցեագրվում է նաև Թուրքիային։ Պրոֆեսոր Բեդրո Գոիշվիլին իշխանամետ «Սաքարթվելոս Ռեսպուբլիկա» թերթում 2004թ. ապրիլի 2-ին տպագրված *«Վրաստանի սահմանները և այսօրվա իրականությունը»* վերնագրով հոդվածում հենց այդ խնդիրն է առաջ քաշում, սակայն այս անգամ տարածքային պահանջատիրությունը վերաբերում է ոչ միայն Թուրքիային, այլև Ադրբեջանին, Ռուսաստանին ու Հայաստանին։ Ըստ հեղինակի, Վրաստանը ժամանակի ընթացքում կորցրել է իր հողերի մեծ մասը՝ Թուրքիայի 15,622 կմ^2 տարածքը (Լազստան՝ 3,925 կմ^2, Արդվին՝ 5,724, Օլթիսի՝ 3,040, Արդահան՝ 5,724), Հայաստանի 2,478 կմ^2 տարածքը (Լոռի, Փամբակ, Շամշադին),

Ադրբեջանի 3,667 կմ² տարածքը, իսկ Ռուսաստանը, ըստ հեղինակի վկայության, Վրաստանից գրավել է Դվալեթին, Դարիալի կիրճը:

Բ.Գոիշվիլու հոդվածն արձագանք գտավ «*Georgian Times*» թերթի 2004թ. ապրիլի 8-15-ի համարում. ներկայացված էր Ալեքսանդր Մանվելաշվիլու *«Վրաստանի սահմանները»* գրքից մի հատված, որտեղ կրկին առաջադրվում են «վրացական տարածքային» պահանջները: Մասնավորապես նշվում է, որ հարավում Վրաստանի սահմանը պետք է անցնի Փամբակի ու Բեզոբդալա լեռների միջև (Լոռին մնում է Վրաստանի կազմի մեջ)՝ հարավում Վրաստանին թողնելով Չըլդր լիճը և հատելով Արաքսն ու Կուրը բաժանող լեռը: Այնուհետև սահմանը, ըստ հեղինակի, շրջանցում է Տորտումը, անցնում Էրզրումի մոտով՝ Մամախաթունի միջով, ներառում Բայբուրթը, անցնում Գյումուշխանեի մոտով՝ հասնելով մինչև Սև ծով: Հոդվածն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. *«Այս սահմանները պետք է ամրագրվեն բոլոր վրացիների հոգիներում և դառնան երազ: Իսկ երազը ենթադրում է նպատակ»:*

2004թ. ապրիլի 19-ին «Մթավարի գազեթի» թերթում հրապարակված հոդվածում մասնավորապես նշվում է. «...սահմանների առնչությամբ ներկայիս իրավիճակում ԵՄ անդամակցությունն անհնարին է, քանի որ ԵՄ-ը մեծ ուշադրություն է հատկացնում Վրաստանի սահմաններին, նրա տարածքային ամբողջականությանն ու անվտանգությանը՝ կապված այն բանի հետ, որ այդ միությանը Վրաստանի անդամակցության դեպքում մեր երկրի սահմանը կհամընկնի ԵՄ ծայրարևելյան սահմանի հետ»: Իսկ «Կրիմինալի» շաբաթաթերթը (ապրիլի 22-28) ուշադրություն է հրավիրում սահմանի մի քանի հատվածների վրա և նշում. *«Դրանք այն տարածքներն են, որոնք չեն պատկանում ոչ մեզ, ոչ հարևան հանրապետություններին, դրանք չեզոք գոտիներ են... Մենք պատրանքներ չունենք, որ երբևէ կվերադարձնենք մեր պատմական սահմանները»:*

Կրկին «*Georgian Times*» թերթի 42-րդ համարում (2004թ. հոկտեմբերի 21-28) լույս տեսած հոդվածի հեղինակ Գիա Խնելին, որը բավականին ակտիվորեն է «զբաղվում» պաշտոնական Բաքվի նկատմամբ տարածքային պահանջների առաջադրմամբ, ԵՄ Թուրքիայի հավանական անդամակցության հարցում՝ որպես ազդեցության լծակ, փորձում է առաջ քաշել պաշտոնական Անկարայի՝ Թուրքիայում բնակվող վրաց համայնքի նկատմամբ «ոչ ժողովրդավարական» մոտեցումը: *«Լազի-մեսխեթյան ինքնավարություն Թուրքիայում (ԵՄ փոխարեն)»* խորագիրը կրող հոդվածում հեղինակը մասնավորապես նշում է. «Քանի որ Թուրքիան շատ է ցանկանում մտնել ԵՄ, մենք կարծում ենք՝ ժամանակն է Թուրքիայի վրացիներին ընձեռել մշակութային ինքնավարություն (բացել դպրոցներ ու քոլեջներ վրացերեն ուսուցմամբ, թատրոն, ռադիո, հեռուստատեսություն և այլն, և այս ամենը պետք է ֆինանսավորի Թուրքիայի կառավարությունը)», և որ *«Թուրքիայի վրացիները բնակվում*

են իրենց իսկ հողում, նրանք տեղի բնիկներն են (չնայած նրան, որ շատերին արտաքսել են վրացական հողերից): Այս հարցը քարոզելու նպատակով Վրաստանին հարկավոր է Եվրոպայում գտնել որևէ երկիր, և մենք կարծում ենք, որ կգա ժամանակ, և Թուրքիայի ղեկավարությունը ըմբռնումով կզբաղվի այդ խնդրով»: Ըստ հեղինակի՝ «վրացական (լազի-մեսխեթյան) ինքնավարությունը» պետք է ստեղծվի «վրացական պատմական տարածքների վրա»՝ Արդվինի, Ռիզեի, Տրապիզոնի, Գյումուշխանեի և Օրդուի նահանգներում[1], ինչպես նաև Կարսի նահանգի արևմտյան հատվածում (ներառյալ Կարս քաղաքը), Էրզրումի նահանգի հյուսիսային մասում (Էրզրում քաղաքով հանդերձ) և, վերջապես, Ագրինի նահանգի հյուսիսարևելյան հատվածում, Ալաշկերտի շրջանում:

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի շուրջ

Առավել խնդրահարույց է Սամցխե-Ջավախքում թուրք մեսխեթցիների վերաբնակեցման հարցը: Դեռևս շարունակվում են նրանց ազգային պատկանելության շուրջ ընթացող բանավեճերը. ուսումնասիրողներից ոմանք հաստատում են, որ դրանք իսլամ ընդունած էթնիկ վրացիներ են, իսկ մյուս մասի կարծիքով՝ Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում Վրաստան եկած թուրքեր: Խնդիրն այն է, որ նախքան 1944թ. Սամցխե-Ջավախք նահանգի գրեթե բոլոր շրջանները, ներառյալ Ախալքալաքը, հյուրընկալել էր մեծաթիվ քանակությամբ թուրք մեսխեթցիների: Ստալինյան ժողովրդական տեղահանումների ծրագրի համաձայն, 1944թ. շուրջ 100.000 թուրք մեսխեթցիներ այս շրջաններից վերաբնակեցվեցին Կենտրոնական Ասիայում, գլխավորապես՝ Ուզբեկստանում: 1989թ. հունիսին Ֆերգանայի հովտում (Ուզբեկստան) տեղի ունեցած ազգամիջյան բախումների արդյունքում նրանց մի մասը վերաբնակեցվեց Կենտրոնական Ասիայի այլ երկրներում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Ադրբեջանում և Թուրքիայում: Թուրք մեսխեթցիները մեծ քանակություն են կազմում Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում, ինչին տեղացիները խիստ բացասաբար են մոտենում: Չնայած այստեղ նրանց զգալի մասը վերաբնակվել է գրեթե 10 տարի, այնուհանդերձ, չունի մշտական բնակության իրավունք, ուստի ենթարկվում է որոշակի հետապնդումների: Իրավիճակն այլ է Ադրբեջանում, որտեղ նրանց մեծամասնությունը համախմբված է բնակվում և ապահովված է աշխատանքով, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում: Վերջին ժամանակներս թուրք մեսխեթցիների վերաբնակեցման հարցում ակտիվություն է ցուցաբերում ԱՄՆ-ը: 2004թ. փետրվարին ԱՄՆ ղեկավարությունն ընդունեց մի ծրագիր, որը նախատեսում էր թուրք մեսխեթցիների՝ Կրասնոդարի երկրամա-

[1] Տե՛ս Հավելված # 2:

սից դեպի Միացյալ Նահանգներ կամավոր վերաբնակեցում: Ի դեպ, մեկնման հայտագրերն ընդունվում են միայն Կրասնոդարի երկրամասում բնակվող մեսխեթցիներից:

1999թ. Վրաստանն ընդունեց թուրք մեսխեթցիների՝ երկիր վերադառնալու 12-ամյա ժամկետացուցակ, որը դարձավ Վրաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության նախապայման: Օրինագծի համաձայն, մինչև 2001թ. Վրաստանը պարտավորվում էր ընդունել վերադարձի մասին օրենք, սակայն այն մինչև օրս չի ընդունվել, քանի որ երկրի իշխանությունները գիտակցում են այն բոլոր բարդությունները, որոնք կուղեկցվեն Վրաստան մեսխեթցի թուրքերի վերադարձով՝ հատկապես երբ դեռևս լուծված չեն աբխազական ու հարավօսական հակամարտությունները:

Մեսխեթցի թուրքերի համատեքստում պետք է առանձնացնել Ջավախքի գործոնը: Ինչպես հայտնի է, մի ժամանակ բավականին ակտիվորեն քննարկվում էր Ջավախքում թուրք մեսխեթցիների վերաբնակեցման հարցը: Հետագայում այդ հարցը կարծես թե փակվեց, սակայն հարավկովկասյան զարգացումները կարող են այնպես ընթանալ, որ առաջիկայում հարցը կրկին վեր հառնի:

Հետևություններ

Վրաստանի տարածքային պահանջատիրությունը Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ, ըստ էության, նոր գործոն է Հարավային Կովկասի քաղաքական միջավայրում: Տեղեկատվական առումով այն դեռևս նոր է մուտք գործում լրատվական դաշտ և սպասելի է, որ առաջիկայում նրա «շրջանառությունը» կմեծանա[1]:

Որպես գործոնի առաջացման օբյեկտիվ պատճառ հարկ է նշել ազգայնականության աճը վրացական վերնախավերում: Այլ կերպ ասած, եթե Թբիլիսիի քաղաքական փիլիսոփայության հիմքում «Մեծ Վրաստանն» է, ապա նման թեմաների ի հայտ գալը բավականաչափ օբյեկտիվ է:

«Վրաստանի տարածքային պահանջատիրությունը Թուրքիայի և Ադրբեջանի նկատմամբ» թեման հարկ է դիտարկել նաև վրացաբնակ ադրբեջանցիների[2] առնչությամբ: Իր քրիստոնեական և ազգայնական տարրերն ընդգծող Վրաստանում մահմեդական ադրբեջանցիների համար աստիճանաբար ավելի կդժվարանա տալ համակարգային *ego*-ի հետ կապված հարցերի պատասխանը: Այդ առումով թեման ունի իրավիճակն «ակտիվացնող» նշանակություն:

---

[1] «Շրջանառության» մեծացման հարցում իր դերը կունենա նաև գործոնի նորություն լինելը:

[2] Ըստ մոտավոր տվյալների, նրանց թիվն այսօր հասնում է 400 հազարի, և նրանք ունեն ժողովրդագրական ամենամեծ աճը Վրաստանում:

Հավելված № 1


Վրաստանի տարածքային կախվածքներն Ադրբեջանից
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ՍՈՉԻ
Գագրա
Գյուդաուտա
ՎՐԱՍՏԱՆ
ՍՈՉԻ
Սև ծով
Սամցխե-Ջավախքի մարզ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հավելված № 2


ՌՈՒՍԱՍՏԱՆ
ՎՐԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԻՐԱՆ
ՔՈՒՐԴԻՍՏԱՆ
ՍԻՐԻԱ
ԹՈՒՐՔԻԱ
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՍԱՄՍՈՒՆ